

Արձանագրություն №6 (290)

ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի 2016 թ-ի հունիսի 1-ի նիստի

Գիտխորհրդի նիստը վարում էր ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը:

Ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա են 28 անդամներից 22-ը: Ապահովված է անհրաժեշտ քվորումը:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատվեց գիտխորհրդի նիստի օրակարգը:

**Օրակարգ.**

1. Բակալավրի առկա կրթական ծրագրով ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների, ինչպես նաև մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին:
2. Մայիսի 26-ին ԵՊՀ-ի գիտական խորհրդի նիստում ընդունված նոր դրույթների մասին:
3. Հրատարակմանը երաշխավորելու մասին:
4. Ընթացիկ հարցերի մասին:

1. **Ֆակուլտետի դեկան, դոցենտ Պ.Բալայանը** տեղեկացրեց, որ ռուս բանասիրության ֆակուլտետում ավարտվել են բակալավրի առկա կրթական ծրագրով ամփոփիչ քննությունները, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունը:

Պ. Բալայանը ներկայացրեց հանձնաժողովի նախագահի դրական կարծիքը:

Գրանցվել են հետևյալ արդյունքներ.

բակալավրի առկա կրթական ծրագրով ավարտական աշխատանքներ` 47 գերազանց, 29 լավ, 16 բավարար:

ամփոփիչ քննություններ` 39 գերազանց, 20 լավ, 33 բավարար, 2 անբավարար:

մագիստրոսական թեզերի պաշտպանություն` 13 գերազանց, 9 լավ, 4 բավարար, 2 չներկայացած:

Ֆակուլտետի դեկանը անդրադառնալ որոշ հարցերի:

1. Ավելի ուշադիր լինել ավարտական աշխատանքի թեմայի և բովանդակության համապատասխանությանը, որպեսզի չլինի, որ թեման ավելի լայն է, քան բովանդակությունը:

2. Հետևել աշխատանքին ներկայացվող տեխնիկական պահանջների կատարմանը, որ չլինի աշխատանքի ծավալի արհեստական ավելացում:

3. Նորացնել **ռուսաց լեզվի** քննության վերլուծության համար առաջարկվող նախադասությունները:

4. **Միջմշակութային հաղորդակցում** մասնագիտության ամփոփիչ քննությունների հարցաշարում ավելացնել ռուս-հայկական գրական կապերին և փոխազդմանը, ռուս-հայկական լեզվաերկրաբանությանը վերաբերվող հարցեր:

Առանձին քննարկում ծավալվեց ընդդիմախոսի կարծիքի բովանդակության և նրա պաշտպանությանը ներկա լինելու շուրջ: Պրոֆեսորներ Վ.Հարությունյանի և Լ.Մաթևոսյանի ելույթներում ներկայացվեց մյուս բուհերի փորձը: Այս հարցով ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ՝ պրոֆեսոր Մ. Ջանփոլադյանը, պրոֆեսոր Լ.Բրուսյանը, դոցենտ Լ. Հակոբյանը, դոցենտ Դ.Գազարովան, Թ. Միջիֆերջյանը:

### Որոշեցին՝

1. Մինչև ս.թ. հոկտեմբերը ներկայացնել նորացված հարցաշարը:

2. Դիտարկել **հակազբազոդություն** էլեկտրոնային ծրագրի օգտագործման հնարավորությունը մագիստրոսական թեզերի նկատմամբ:

3. Պայմաններ ստեղծել թեզերի պաշտպանության ժամանակ նյութերի էլեկտրոնային ներկայացման համար:

2. **Ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը** ներկայացրեց մայիսի 26-ին ԵՊՀ-ի գիտական խորհրդի նիստում ընդունված նոր դրույթները: Քանի որ փոփոխվել է ԵՊՀ-ի կարգավիճակը - այն դարձել է հիմնադրամ - փոփոխության է ենթարկվել նաև իրավափաստաթղթային բազան: Մանրամասն տեղեկություններ կարող էք ստանալ ԵՊՀ կայքից, հղումը ուղարկվել է ամբիոններ: Փոփոխվել է դեկանի, ամբիոնի վարիչի, պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության կարգը:

**Որոշեցին՝** Ծանոթացնել ամբիոնների աշխանակիցներին նոր դրույթներին:

**3. Հաջորդիվ լսեցին** ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի ամբիոնի /բնագիտական ֆակուլտետների համար/ դասախոսներ՝ Մ.Դ. Քեսայանի, Ն.Վ. Հովակիմյանի, Ն.Վ. Բաղրամյանի, ռուսաց լեզվի ամբիոնի /հումանիտար ֆակուլտետների համար/ դասախոս՝ Ն.Ս.Այվազյանի «Пособие по русскому языку (для студентов факультета географии и геологии по специальности "Туризм и сервис"») - «Ռուսաց լեզվի ձեռնարկ /աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի "Զբոսաշրջություն և սպասարկում" մասնագիտության ուսանողների համար» ուսումնական ձեռնարկի հրատարակման հարցը: Ֆակուլտետի մեթոդմիավորման հախազահ պրոֆեսոր Վ.Հարությունյանը ներկայացրեց ձեռնարկը: Քվեարկությամբ միաձայն ընդունվեց հետևյալ որոշումը:

**Որոշեցին.** ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի ամբիոնի /բնագիտական ֆակուլտետների համար/ դասախոսներ՝ Մ.Դ.Քեսայանի, Ն.Վ.Հովակիմյանի, Ն.Վ. Բաղրամյանի, ռուսաց լեզվի ամբիոնի /հումանիտար ֆակուլտետների համար/ դասախոս՝ Ն.Ս.Այվազյանի «Пособие по русскому языку (для студентов факультета географии и геологии по специальности "Туризм и сервис"») - «Ռուսաց լեզվի ձեռնարկ /աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի "Զբոսաշրջություն և սպասարկում" մասնագիտության ուսանողների համար» ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակման համար:

**4. Ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը** տեղեկացրեց, որ ավարտվել է դիմորդների հայտերի ընդունումը: **Ռուսաց լեզու և գրականություն** մասնագիտությամբ կա 32 դիմում, **Լեզվաբանություն և ՄՄՀ** մասնագիտությամբ կա 17 դիմում:

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ.Ռ. ԴՊԻՐՅԱՆ